ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2017թ. թիվ 03/73-1/9654-17 գրությամբ «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի 24.05.2017թ. թիվ 08/18/3575-17 գրության հիման վրա, 31.05.2017թ. թիվ 03/73-1/9654-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն 13.06.2017թ. գրությամբ, հայտնել է որ մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և ճանաչվել է ընտրված մասնակից, որից հետո պարզ է դարձել, որ Ընկերության կողմից ճիշտ չեն հաշվարկվել հայտի Հավելված 4-ով առաջարկվող գները, որոնք եղել են ինքնարժեքից ցածր, ինչի արդյունքում Ընկերությունը գերադասել է հրաժարվել պայմանագիր կնքելուց և Ընկերությանը չպատճառել շատ ավելի մեծ վնասներ:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության գործունեության ընթացքում գնումների գործընթացի ժամանակ պայմանագիր կնքելուց հրաժարվելու միակ դեպքն է արձանագրվել և խնդրել է հաշվի առնել այդ հանգամանքը և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 13.06.2017թ. գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ քննչական կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.07.2017թ. թիվ 08/18/3575-17 գրությամբ ներկայացրել է ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով 10.04.2017թ.

կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգի 1-3, 6, 11, 15-17, 19, 22, 23, 28, 35-37-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.06.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/14 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/14 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թիվ 1-3, 6, 11, 15-17, 19, 22, 23, 28, 35-37-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 1-3, 6, 11, 15-17, 19, 22, 23, 28, 35-37-րդ չափաբաժինների մասով, «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. Նույն արձանագրության համաձայն՝ որոշվել է հաստատել պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարաության տեքստը և ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

5. Պատվիրատուն 22.05.2017թ. departmentofcommittee@gmail.com էլեկտրոնային հասցեից ծանուցել է Ընկերությանը, որպեսզի վերջինս սահմանված կարգով

Պատվիրատուին ներկայացնի պայմանագրի ապահովումը և ստորագրված պայմանագիրը՝ կից ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ 22.05.2017թ. «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է թիվ 18-55-17 գրությունը, համաձայն որի Ընթացակարգի 1-3, 6, 11, 15-17, 19, 22, 23, 28, 35-37-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

7. «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն 13.06.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և ճանաչվել է ընտրված մասնակից, որից հետո պարզ է դարձել, որ Ընկերության կողմից ճիշտ չեն հաշվարկվել հայտի Հավելված 4-ով առաջարկվող գները, որոնք եղել են ինքնարժեքից ցածր, ինչի արդյունքում Ընկերությունը գերադասել է հրաժարվել պայմանագիր կնքելուց և Ընկերությանը չպատճառել շատ ավելի մեծ վնասներ:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության գործունեության ընթացքում գնումների գործընթացի ժամանակ պայմանագիր կնքելուց հրաժարվելու միակ դեպքն է արձանագրվել և խնդրել է հաշվի առնել այդ հանգամանքը և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2017թ. թիվ 03/73-1/9654-17 գրությունը, ՀՀ քննչական կոմիտեի 24.05.2017թ. թիվ 08/18/3575-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնումների նախապատրաստում.

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում, որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ապահովման չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի հինգ տոկոսից և չի կարող գերազանցել պայմանագրի գնի տաս տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիմնա վրա՝ պատվիրատուի կողմից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով***

նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թիվ 1-3, 6, 11, 15-17, 19, 22, 23, 28, 35-37-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 1-3, 6, 11, 15-17, 19, 22, 23, 28, 35-37-րդ չափաբաժինների մասով, «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշվել է հաստատել պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Պատվիրատուն 22.05.2017թ. departmentofcommittee@gmail.com էլեկտրոնային հասցեից ծանուցել է ընկերությանը, որպեսզի վերջինս սահմանված կարգով Պատվիրատուին ներկայացնի պայմանագրի ապահովումը և ստորագրված պայմանագիրը՝ կից ներկայացնելով պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ 22.05.2017թ. «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է թիվ 18-55-17 գրությունը, համաձայն որի Ընթացակարգի 1-3, 6, 11, 15-17, 19, 22, 23, 28,

35-37-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն 13.06.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ, հայտնել է որ մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՔԿԴ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին և ճանաչվել է ընտրված մասնակից, որից հետո պարզ է դարձել, որ ***Ընկերության կողմից ճիշտ չեն հաշվարկվել հայտի Հավելված 4-ով առաջարկվող գները, որոնք եղել են ինքնարժեքից ցածր, ինչի արդյունքում Ընկերությունը գերադասել է հրաժարվել պայմանագիր կնքելուց և Ընկերությանը չպատճառել շատ ավելի մեծ վնասներ:***

Այսպես՝ Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:***

«Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում, որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց:***

Խորհուրդն, ուսումնասիրելով «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, արձանագրում է, որ Ընկերությունը մեկ անգամ է հրաժարվել պայմանագիր կնքելուց, հետևաբար թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ»

ենթակետով սահմանված խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2017թ. թիվ 03/73-1/9654-17 գրությամբ «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00885285) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ